

ված սխալ էզրավացությունների, մեզ կատարած աշխատանքի մեջ ոչ մի դրական բան չտեսնելու, այն ամբողջությամբ սեռացնելու նիվանդոս առամադությունների նկատ, չի նպաստել մեզ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությունը վերաբերող կարևոր մի հարցի գիտական բուսաբանությունը:

Ինչ վերաբերում է Հայկական ՍՍՌ-ի Ա ակադեմիկոս Ալուս Հովհաննիսյանի կարծիքին, որ տեղ առաջ հայտնի հարցերը պահանջում են գիտական մանրամասն վերլուծումներ ու լայն վաստակումներ, դրան կանգնողատեսնեմ առանձին:

Գրո՛ք, Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԵՐՐ ԲԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Պատասխան պրոֆ. Վ. Պարսամյանին)

Անցյալ տարի մենք երկու անգամ առիթ ունեցանք՝ «Պատմա-բանասիրական հանգես»-ի էջերում անգրագետնայու պրոֆ. Վ. Պարսամյանի կազմած «Լեհոհայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» փաստաթղթերի ժողովածուին:

«Հանգես»-ի խմբագրությանն ուղղած իր նախորդ, ինչպես և ներկա նամակում Վ. Պարսամյանը մեր բնագատության էությունը շնականայու տեղ զննելով, փորձում է բանն այնպես ներկայացնել, որ իր վեճի առարկա զարձած խնդիրը պերաբերում է «մի լավականի հոտմանը» և բավարարվում է միայն որակելով այն «ազարգայես թյուրիմացության արդյունք»:

Թվում էր, որ Վ. Պարսամյանը գիտնականին վայել ոգոսխոհություն կցուցաբերեր, նիստ էզնահատեր տեղի ունեցածը, հաշվի կտներ անհրժեշտ փաստերը, կվերանայեր պատմական իրողությունները խեղաթյուրող իր քեզերն ու ներազրությունները և կհրաժարվեր զրանցից: Բայց իրող: Ինչպես երևում է ներկա նամակից, նա համոտում է իր սխալների մեջ և փորձում է արգարացնել ու նույնիսկ «հիմնավորել» զրանք: Եր հասցեին արված սկզբունքային գիտողությունները այս անգամ նա որակում է որպես կեզծիք ու խժրժանք, որպես «նեզափոխումների վրա կոտուցված սխալ եզրակացություններ»: Սակայն իր չզննումների համար շունենայով ապացուցներ, Վ. Պարսամյանը նորից աղավազում է փաստերը, ռաբցնում նշմարությունը և գիմում էժանազին ու զատապարտելի միջոցների: Նա անգամ փորձում է բանն այսպես ներկայացնել, որ իր հասցեին արված գիտողությունները ռանձողություններ են հույ ազատագրական շարժումների և զրանց մասնակից հայ հայրենասերների զեմ:

Ինչի՞ համար է այս էժանազին սպեկուլյացիան:

Վ. Պարսամյանի այս վարմունքի մեզ չի զարմացնում. Հակադիտական քեզերը ազգային շղարշով ուղարկելու նման փորձը ու նոր է և ու է: Իր տեսակի մեջ եզակի: Դժվար չէ հասկանալ, որ Վ. Պարսամյանը ՑԱՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ կոծկել զործի էությունը և ազգային սահմանները «բերկելու» խոթի տակ իլյացնել իր սխալների բնագատությունը: Փոխանակ ըստ էության հերքելու իր հասցեին արված գիտողությունները, նա սահմանափակվում է լոկ հայտարարություններով, ամենին շխոթելով փաստերը կեզծելուց և անձնական վերավորանքներից: Սակայն, զիմենք փաստերին:

1. «Լեհոհայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» վավերագրերի ժողովածուի վերաբերյալ մեր սրած առաջին գիտողությունը ուղղված էր Վ. Պարսամյանի այն քեզի, եւմ, ըստ որի Ուկրաինայից և Լեհաստանից եկած մի խումբ հայեր մասնակցել են Դավիթ-Քեկի ապստամբությանը: Ինենք զեկ եեն, որ իր այդ քեզը (քեզ որում միակ քեզը) հիմնավորելու միտումով նա հորինել է «փաստեր» և յուրովի մեկնարկներ զրանք: Անտեսելով պատմական փաստերը, նա այդ հայերից ոմանց զասել է Ողնախներում և Սյունիում օտար նվաճողների զեմ նայ ժողովրդի մզած կոիվներում հերոսացած Դավիթ-Քեկի, Նսայի Հասան-Ջալալյանի, Ավան յուզբաշու, Լիխիբար Սպարապետի և մյուսների շարքը, զարծել նրանց զործակիցները, բոլորին էլ արժանացնելով միևնույն զնանատակաբին: Այս սցեների մեղաստում է պատմական համարությունը, հայ ազատագրական պայմարում բեկած հերոսների նիշատակի նկատմամբ:

Ինչպես երևում է Վ. Պարսամյանի ներկա նամակի մեջ «վերկած» խոստովանությունից, ըստ երևույթին այժմ նա էլ է զրտակցում իր արածի արտավարությունը, բայց զարմանալի է.

որ հաշտություն չի ցուցաբերում հրապարակով բնդունելու քույլ տված սխալը: Նա միայն գրում է. «Երև. գրքում մի տեղ անգամ տպված լինել այն, ինչ մեզ վերադրում է Հ. Խաչատրյանը, ապա ամեն մի բառերից բնդեցող կապեր, որ դա վերապակ է և ուրիշ ոչինչ»: Ամենին ոչ, խոսքը վերաբերում է հակազդիտական մի ամբողջ կոնցեպցիայի. պատմական իրողությունների կեղծմանը և ոչ չե «վերապակին»: Չմեզ ձեռնայով. Վ. Պարսամյանը փորձում է եղտոր «վերապակ» ներկայացնել և դրանով հարցը սուլառել: Բայց դա անհույս փորձ է: Չէ՞ որ այս «վերապակ» իր մեջ պարփակում է գրքի բուն էությունը՝ սկսած վերնագրից և վերջացած առաջարկի եզրահանգումով: Վ. Պարսամյանը զիտակցաբար չբացահայտում է հիմնական, սկզբունքային հարցերը: Նա շարունակում է աղմկել այն մասին, թե ի՞նչ մոտերք էս իր աղավաղել էմ, գրքի առաջարկի չբացահայտում ակնարկից վերցնելով և իրար կցելով երկու տարբեր նախադասություններ, վերագրել իրեն մոտերք, որոնք ինքի չի ասել: Նրա այս ինքնամեղմամբ հերքելու և մեր նշած փաստերի ճշտությունը հաստատելու նպատակով անցյալ տարի հարկադրված եղանկ ամբողջությամբ մեջ բերել գրքի առաջարկի՝ հայերեն և ռուսերեն լեզուներով տպված համապատասխան հատվածը: Սակայն այդ բոլորից հետո էլ նա շարունակում է համառել, հայտարարելով. «Նա այդպիսի բան չեմ ասել»: Բայց հարկադրված ենք կրկին անգամ հարցնելու Վ. Պարսամյանին. վերջապես ո՞ւմ են պատկանում սենով սպիտակի վրա գրված, 3000 տպաֆանակով հայերենով և ռուսերենով տպված առաջարկի հետևյալ տողերը.

«1724—1728 թվականներին Ղուրաբաղի և Սյունիի հայերը անօրինակ հերոսամարտեր են մղում քուրմական զավթիչների դեմ: Մի շարք տեղերում նրանց օգնում ու օժանդակում են նաև վրացիները, ադրբեջանցիներն ու Լոռիները:

1726 թվականին Մեծ և Փոքր Ողնախներում, 1727 թվականին Հայիծղի և Մեղրիի նսկատամարտերում հայերը փոքրաթիվ ուժերով փայլուն հաղթանակներ են տանում քուրմական զորքերի դեմ. Լառույքան, խիզախության և հալոնապիության բազմաթիվ վառ օրինակներ գրում մեր ազատագրական պայքարի պատմության մեջ: Այս կոնկրետում, բացի հռչակված զորավար Կավիր-Քեկից, աչքի են բնկնում նաև Խաչի Հասան-Ջալալյանը, Ավան յուզբաշին, Մխիթար Սպարապետը, Ստեփանոս Շահումյանը, Քարխան յուզբաշին, Գրիգոր յուզբաշին (նույն ինքը՝ Դեմիտր Ստեփանովը, որը, ինչպես հայտնի է, 1728 թվականի ապրիլին միայն մտադրվեց Իզմայիլ Լաղաից նախադրվելու Ռուսաստան՝ Ողնախներ զենքի ու զինամթերքի — Հ. Խ.), տեղ Ավետիսը, Քոռոսը, Բայասպուրը, Օհանը, Բարահանը, Ավրանդիլը և շատ ուրիշներ:

ԱԶԱՏԱԿՐԱԿԱՆ ԱՅՈ ՇԱԽՈՒՄՆԵՐԻՆ Է. ԱՀԱ, ՈՐ ՄԱՌՆԱԿՑԵԼ ԵՆ ՆԱԽՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ԼԵՂԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵԿԱՄ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՈՒՄՆԵՐԻՆ»² (բնդգծումը մերն է — Հ. Խ.):

Որանք ո՞չ պատահական «վերապակներ» են և ո՞չ էլ տարբեր նախադասություններից վերցված տողեր, այլ բնականվոր հարցերի վերաբերյալ պրոֆ. Վ. Պարսամյանի մոտերքն ու եզրակատարությունները, նրա իմացությունների արգասիքը:

2. Մեր գիտողություններում նշված է, որ «Լեհահայերի մասնակցությունը Կավիր-Քեկի ապստամբությանը» զիբր գիտական ուսումնասիրություն չէ, թեև Վ. Պարսամյանը և հրապարակչությունը ներկայացրել են այն իբրև սուղիտիսին. 238 էջից բաղկացած այդ զիբր իրականում վավերագրերի ժողովածու է, որի մեջ զետեղված են արխիվային փաստաթղթեր, դրանց բարդմանությունները և դժվար, անբնական խոսքերով բացատրությունները: Ժողովածուին կցված է Վ. Պարսամյանի կողմից գրված ԲՆԿԱՄԵՆԸ 22 ԷՋԻՑ ԲԱԿԱՆԱԿԱՆ առաջարկներ և դրա ռուսերեն բարդմանությունը:

Վ. Պարսամյանը այժմ առաքելով մեզ, հայտարարում է. «Իսկ սրտե՞ղ է ասված, որ դա զիտական ուսումնասիրություն է»: Երև իբր, նա նույնպես ղտնում է, որ բնությունը առնվող զիբր, այդպիսին չէ. ապա էլ ինչո՞ւ ուսումնասիրելով զիտական ախտատանի էրիկայի հանրահայտ, բոլորի համար պարտադիր պահանջը՝ գրքի կազմի, հիմնական ու զուգահեռ տիտղոսաբերյների, անգամ վերջին բերքի վրա հայերեն և ռուսերեն խոշոր տառերով ուղղես ՀԵՂԻՆԱԿ ղրոշմվել է Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ: ճիշտ է. Վ. Պարսամյանը այժմ ջանում է ապացուցել, թե ի՞նչ կատարածք մի հարցի վերաբերյալ արխիվային նոր նյութերի հրապարակում է, համապատասխան առաջաբանով և հավելվածով, ուրիշ ոչինչ: Բայց չէ՞ որ հենց այս ղելում էլ այն զիբր չէր կարող ամառվել պատմության «ԲՈՒՔ ԷՋԵՐԸ ԼՈՒՄԱՐԱՆՈՂ» շնոր ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ», իսկ Վ. Պարսամյանը՝ ՀԵՂԻՆԱԿ: Անհասկանալի է, թե ինչպես է, որ պրոֆ. Վ. Պարսամյանը հորջորջվել է

2 Վ. Ա. Պարսամյան, Լեհահայերի մասնակցությունը Կավիր-Քեկի ապստամբությանը, 1962, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, էջ 17, նույնը ռուսերեն՝ էջ 33—34:

Ինդինակ մի դործի, որի մեջ մեկ տասներորդից էլ պակաս է նրան պատկանող սեփականն ու ինքնուրույնը:

Այս «նոր աշխատության» հեղինակը իր 22 էջից բաղկացած առաջարկում վայելչվեցող տարրություններ է արել հայ ժողովրդի փարոկալի անցյալի մի քանի դարերի պատմության հանդուգն հաբեների վերաբերյալ, հանդիլ է արտառոց եզրակացությունների և առաջ լաջել «նոր» թեղեր, որոց զիտական հիմնավորման համար շունի և ոչ մի ապացույց:

3. Մեր այն դիտողությունը, թե «էկհանայերի մասնակցությունը Գավիր-Բեկի ապստամբությանը» ժողովածուի վերնագիրը չի համապատասխանում փաստարկերի բովանդակությանը, բե այն հնարովի է ու շինծու, Վ. Պարսամյանը պատասխանում է. «Ընդունենք, որ այդպես է. բայց չէ՞ որ զիտին ունի երկրորդ վերնագիր, որը լրացնում է առաջինին և լիովին համապատասխանում է նրա բովանդակությանը. ինչո՞ւ է այդ անտեսվում: Բայց մի՞թե դա է զիտավորը: Մենք բերես չառարկեինք այդ և նման դիտողություններին, երե փոքր շարվեր հախուռն կերպով ժխտելու ամենակարևորն ու զիտավորը՝ էնէկստանի ՏԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԿԱՊԵՐԸ, ԱՅԻ ՇԱՐԺՈՒՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ» (ընդգծումը հեղինակինն է — Շ. Խ.):

Ինչպես նկատում է ռեյտերգոր, պրոֆ. Վ. Պարսամյանը լեռնաբերի փաստերի նշման տակ հարկադրված տեղի է տալիս և կիսաբերան ընդունում զբի վերնագրի վերաբերյալ արված մեր դիտողությունը: Սակայն միաժամանակ նա ակնհայտ նիղ է զործադրում նվազեցնելու դրա նշանակությունը, և բանն այնպես է ներկայացնում, թե իրո այստեղ էլ վեների առարկա հարցը վերաբերում է սոսկ զբի վերնագրի լեղվական անհաջող ձեակերպմանը: Ուստի, որպես «մեղմացուցիչ ղեպի հանցանաց», վկայակոչում է «երկրորդ վերնագիրը»: Բայց չէ՞ որ խնդիրը ամենին էլ վերնագրի «անհաջող» ձեակերպմանը չի վերաբերում, այլ այն հիմնական թեղին, որը թեպետ չինծու է ու խարուսիկ, բայց ոչ պատահական, քանի որ այն հիմ է հանդիսացել այդ զբի լույս աշխարհ ղալուն: Դա «էկհանայերի» Գավիր-Բեկի ապստամբությանը մասնակցություն ունենալու նշանակալ ու մտասեռուն թեղն է, որի «հաստատման» նպատակով հեղինակը ոչ միայն զբի առաջարկում երկու լեղուներով, երեսունից ավելի անղամներ շարաշահել է Սյունյաց աշխարհի ազատագրական կոիվների ղեկավար Գավիր-Բեկի անունը, այլ և ուր «փաստեր» է հորինել: Գբի առաջարկում թվարկելով «Լաւարաղի, Սյունիի ազատագրական շարժումների և Գավիր-Բեկի մասին տարբեր ժամանակներում հրատարակված տարբեր հեղինակների (Խաւալետ Եղան, Էնո, Աշոտ Հովհաննիսյան, Ա. Արաճաճյան, Ա. Միքայել) ղործերը, Վ. Պարսամյանը նշել է. որ նրանց «աշխատություններից և ոչ մեկում հիշատակություն անղամ չկա, թե Ուկրաինայի և էկհաստանի հայեր ինչ մասնակցություն են ունեցել բուն երկրում» Հայաստանում Գավիր-Բեկի և մյուսների ղիտավորությամբ 1720-ական թվականներին բոնկված ազատագրական շարժումներին»: Եվ անա առաին անղամ ինքն է «հատնալործում» սղն: Սակայն առավել արտառոցն այն է, որ Վ. Պարսամյանը պնդում է, թե այդ «նոր» փաստարկերը «լույս են սփում... Գավիր-Բեկի, Մխիթար Սղարաղետի, Ավան յուգբալուն... ղործունության վրա»: Գբում ղետեղված վավերագրերի մեջ մարեկալին սովորական աշով նման տեղեկություններ վնտերը ապարղյուն աշխատանք կլինի:

Հենց առաջարկի այս, ինչղես և մյուս բոլոր պնդումները նպատակ են ունեցել հաստատելու հեղինակի՝ «էկհանայերի մասնակցությունը Գավիր-Բեկի ապստամբությանը» «նոր» թեղն լեղմարուացի» լինելը, հետեաղես նաև արղարացնելու զբի բովանդակության ու վերնագրի համապատասխան լինելու հանղամանքը: Ուստի այժմ «երկրորդ վերնագրի» վկայակոչումը բոլորովին էլ տեղին չէ և այն չի կարող փոխել ղործի կուրյունը: Նա ավելսղ անղամ հաստատում է Վ. Պարսամյանի թավական ղիտմիտիվ «ղատնառարանության» ոչ հիմնավոր լինելը:

3 Այստեղ նկատենք, որ պրոֆ. Վ. Պարսամյանը միտումնավոր կերպով չի հիշատակել պատմական ղիտությունների ղոկտոր, հանղուղյալ Պ. Տ. Հարությունյանի «Освободительное движение армянского народа первой четверти XVIII века» 1954 թ. Մոսկվայում հրատարակված ղիրքը, որի մեջ հեղինակը հանղամանորեն խուսել է 1728 թ. ամոսնր կամենեց-Պողոսկից հայրենիք մեկնած հայերի մասին (տե՛ս էջ 187—188, 238): Եացի այղ, հեղինակը նաև լուրջ ղիտողություն է արել Հայաստանի ղիտությունների ակղեմիայի «Տեղեկարղի» 1952 թ. N 7-ում ապարղված Վ. Պարսամյանի «Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» հղղածի վերարերյալ (տե՛ս նշղած ղիրքը, էջ 6—7):

4 Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, նշղ. ժող., էջ 12—13:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 13:

Ի դեպ նկատենք, որ դրի «երկրորդ վերնադիրը» ևս չի կարող «լիովին համապատասխանել նրա բովանդակությունը»։ Իրկու տասնամյակից էլ պակաս ժամանակաշրջանի, իրոք մի ճարդի մասին խիստ սահմանափակ ու անորոշ տեղեկություններ պարունակող վավերագրերի համար չգտազործել «նոր նյութեր XVIII դարի հայ աղատադրական շարժումների վերաբերյալ» շատ բնորոշակ և խոստումնային ենթավերնադիր՝ տեղիս չէ։ Բայց դա էլ պատահաբար չի առկա։ Ինչպես մեր անցյալ նամակում նշել ենք, այս վավերագրերի կարևոր մասը՝ «նոր վավերագրեր 1720-ական թվականների հայ ազատագրական շարժումների վերաբերյալ» խորագրով հրապարակել են Վ. Ոսկանյանն ու Վ. Մարտիրոսյանը «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1962 թ. № 3-ում։ Վ. Պարսամյանը, որպեսզի արդարացնի ԽՍՀՄ-ում ՍՍՀՄԻՄ ԵՐԽՈՐԴԻ ԱՆԿԱՄԻՄ (ԽՍՀՄ ԱՅՆ ԷՄ ԱՌԱՋԻՆ ԴՐՔՈՎ) ՆՈՒՅՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԸՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, օգտազործել է նաև այս ունասցիոն ենթավերնադիրը։

4. Մեր նախորդ պատասխանում նշել էինք, որ «չի կարելի բնորոշելի համարել Վ. Պարսամյանի կողմից 1728 թվականին Կամենեգ-Պոդոլսկ Բաղադի Գրիգոր Ստեփանովի ու Պետրոս վարդապետ հաշատուրովի հետ Ռուսաստանի վրայով գնացի Ողնախնեք մեկնած մարդկանց նկատմամբ «լեռնահայեր» տեղմինի անվերապահ կիրառումը... Երան՛ ոչ լեռնահայեր և ոչ էլ ուկրաինահայեր ևս, այլ մարդիկ, որոնք Դավիթ-Քեկի ապստամբության ժամանակ և նրանից հիշատակ, հանգամանքների բերումով հեռացել են հայրենիքից, մի ֆանի տարի ապրել են Լեհաստանում, Ուկրաինայում և ապա վերադարձել իրենց երկիրը։ Պարզ է, որ այդ մարդկանց «լեռնահայեր» կամ «ուկրաինահայեր» անվանելը քյուրիմացություն է»։

Վ. Պարսամյանը խուսափում է այս դիտողության մասին որոշակի խոսք ասելուց։ Բայց տեսնենք, թե ովքեր էին այդ մարդիկ։ Անշուշտ նրանք իրենց ավելի լավ են նախաշել, քան ևս կամ Վ. Պարսամյանը։ Նրանք իրենց համարել են փախստականներ, որոնք դուրս են եկել պարսկական տիրապետության սահմաններից այնտեղ սկսված խռոնակությունների ժամանակ, երբ «բուրժուազիան սկսեցին հայերին նեղություն պատճառել»⁶։ Նույնիսկ նշել են երկրից իրենց հեռանալու հիստ ժամանակը։ Որպեսզի մեր ասածները ավելի համոզիչ լինեն, բերենք բաղադրիվ օրինակներից միայն մի ֆանիս (փաստեր կրեւեն հենց իր)՝ Վ. Պարսամյանի կազմած վավերագրերի ժողովածուից)։

Այսպես, 1728 թ. հուլիսին Լիւնաս վարդապետ Տիգրանյանցը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային տեղեկություններ է ներկայացրել Կամենեգ-Պոդոլսկ Բաղադի Մոսկվա եկած Պետրոս վարդապետ հաշատուրովի և մյուսների վերաբերյալ։ Ըստ այդ տեղեկությունների՝ «նա»՝ Պետրոս Պարսկաստանի խռոնակությունների ժամանակ այնտեղից ուղևորվել է Կ. Պոլսի վրայով Լեռնադղձ և այնտեղ մնալով, վերադարձել է Վոլսկի երկիրը Իզմայիլ վայրը իր եղբոր Գրիգոր Ստեփանովի մոտ, որը վաճառական է... Մնացած եկվոր հայերը Լիւնաս վարդապետին իրենց մասին ասել են, որ բոլորը թեև ունեւոր մարդիկ չեն, բայց զինվորականներ են, և ՊԱՐՄԱՆԱՍԻԱՆՆԻՅ ԵՒՅ ԵՒՅ ԵՒՅ տարբեր ժամանակներում՝ Պարսկաստանի խռոնակությունների և խռոնության ժամանակ, ՈՐԻՅ ԱՆՅԵՒ Է ԱՐԴԵՆ 6 ՏԱՐԻ, և եղել են Թուրքիայում, Վոլսկի երկրում, և Լեհաստանում, որտեղ իրենց ապրուստի համար տոնավաճառներում տեղից-տեղ զնայով, եկել են այստեղ, ԻՍԿ ԻՐԵՆՅՈՒ ԱՄԱՆՅՈՒ ԵՒ ԵՒՅԵԱՆԵՐԸ ԵՒ ՄՅՈՒՄ ԱԶԴԱԿԱՆԵՐԸ ՊԱՐՄԱՆԱՍԻԱՆԵՅ ԻՐԵՆՅՈՒՄ ԵՒՅՈՒՅ ԶԵՍՈՒ ՄԱՆՅԵՒ ԵՒ ԱՅՆՏԵՒ...»⁸, (բնորոշումներ մերն են — Շ. Խ.)։

Նույն թվականի հուլիսի 29-ին արտաքին գործերի կոլեգիայից դադարի գերագույն խորհրդին, Պետրոս վարդապետ հաշատուրովի և նրա 22 ընկերների (այդ թվում և Գրիգոր Ստեփանովի) վերաբերյալ ներկայացված ֆաղվածում արված է, որ «նրանք իրենց մասին հայտնել են, որ իրենք պարսկական բնակիչներ են և Պարսկաստանում խռոնակությունների ժամանակ այնտեղից տարբեր ժամանակ հեռացել են քուրմական մարդր, Լեհաստան և այլ տեղեր և այստեղից եկել են, որպեսզի ռուսական կայսրության վրայով անվտանգ զնան իրենց հայրենիքը՝ Պարսկաստան Ողնախնեք, որտեղ մնացել են նրանց կանայք ու երեխաները և ազգականները»⁹։ Մի այլ վավերագրում նույն, 1728 թ. Կիևի վրայով Մոսկվա «եկած հայերը»՝ Իվան, Գրիգոր Իվանովները, Պետրոս Լադեր, Բարուն Նիկիտինը ասացին, որ իրենք զինվորական մարդիկ են, դուրս են եկել Պարսկաստանից այնտեղի խռոնակությունների և խռոնության ժամանակ, որից արդեն անցել

6 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 175։

7 Տե՛ս Վ. Պարսամյան, Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը, էջ 61, 71։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 62—63, 72—73։

9 Տե՛ս նույն տեղում, էջ 91—92։

ն տալի (փաստաթուղթը զրկած է 1728 թվականին — Շ. Խ.) և հղել են թուրքական մարզում և ինքնաստանում, որտեղ տեղից տեղ են անցել և մինչև այսօր զայր ապրել են վաճառականությամբ... այդ հայերը խնդրում են իրենց բոլոր ապա Ռուսաստանից Մեկնելով ՇԱՅԱՆՈՒՆ, ՈՐՅԵՂ ՇՈՒՅՈՒ ՈՒՆԵՆ ՊՅՆԵՆԻ ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԵՐԵՆԻՆԵՐՈՒՆՆԱԾ: Պարզվում է, որ Գրիգոր Ստեփանովի և Պետրոս վարդապետ Խա-տուրովի ղեկավարությամբ 1728 թ. սեպտեմբերին Մոսկվայից ղեկի Սզնախներ մեկնող 26 հոգուց բաղկացած խմբում եղել են՝ 15 հոգի Թուրքիայից եկած հայեր և 11 հոգի Կամենեց-Պոդոլսկից¹⁰: Հայտնի է նույնիսկ հայրենիք վերադարձող հայերից ոմանց ձեռնգրվալը. այսպես, Սարկավաղ Հովակիմ Իֆենասովը ձեռքի է Նախիչևանում, Բաղդասար Նազարովը՝ Թեհրանում, Հարություն Իֆովսեսովը և Իֆսիբ Հովակիմովը՝ Արարատում, Հարություն Բաղդասարովը՝ Էրզրումում և այլն¹²:

Ուրեմն դրանք բոլորովին էլ չլեհահայերա կամ չուկրաինահայերա չլին. նրանք ձեռքի են, սպրել Հայաստանում, մասնակցել 1720-ական թթ. երկրում անդի ունեցած դիմադրական շարժումներին (բայց ոչ Դավիթ-Քեկի ապստամբությանը) և հայաժապան լինելով ուժեղ քննամիտներից՝ հեռացել են հայրենիքից, դարձել փախստականներ: Բայց նրանց բնականինն ու մյուս հարազատները մնացել են երկրում: Ուստի հայրենիք վերադառնալու նպատակով տարբեր տեղերից նրանք զայիս են Ռուսաստանին սահմանակից վայրերը: Տարիների փորձը ակնհայտ կերպով նրանց բերել էր այն հաստատ համոզման, որ ղեկի հայրենիք ապահով հանապարհը անցնում է Ռուսաստանի վրայով: Այսպիսով, մենք այդ մարդկանց մասին ասել ենք այն, ինչ ժամանակին իրենք են ասել իրենց մասին: Ինչ խոսք, եվրոպական հաղափներում, այդ թվում նաև Կամենեց-Պոդոլսկում ապաստանած փախստական հայերը առիթներ են ունեցել շփվելու այդ վայրերում գեղ վաղ ժամանակներից մշտական բնակություն հաստատած հայերի հետ, պատմել հայրենիքի ծանր վիճակի մասին: Գուցե տեղացի հայերից էլ ոմանք համակրել են նրանց, անգամ մտադրվել երկիր զայ (կամ զուցե և եկել են) իրենց աղղակիցների կողմից օտար բռնակալների դեմ մղվող ազատագրական կռիվներին մասնակցելու համար: Սա իրոք հետաքրքիր, մեր պատմության համար կարևոր հարց է, բայց այն ապացուցելու համար ստույգ տեղեկություններ են հարկավոր և ոչ լոկ հայտարարություններ:

Շ. Վ. Լ. Պարսամյանի համակի առիթով մեր նախկին պատասխանում արխիվային փաստաթուղթը էր բերված այն մասին, որ Գրիգոր Ստեփանովը, ինչպես և Կամենեց-Պոդոլսկի հաղափից ղեկի հայրենիք վերադարձող հայերը 1729 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻՎԱՆՈՒՆ ՎԵՐՄԵՆԻՆ, գեղ չլին հասել Սզնախներ և զտնվում էին Դերբենդում: Այս փաստը ինքնին հերքում է Վ. Պարսամյանի բոլոր տեսական կառուցումներն ու եզրակացությունները:

Վ. Պարսամյանը առաերկում է այս փաստի դեմ ևս, բայց ոչ ըստ էության, փաստերի լեզվով, դիտնականի շիտակությամբ: Տպավորություն ստեղծելու նպատակով նա դարձյալ փորձում է բանն այնպես ներկայացնել, թե իր հասցեին արված այս դիտողությունն էլ իբր ուղղված է նայ ազատագրական շարժումների դեմ: Վ. Պարսամյանը, անտեսելով պատմական փաստերը և աղավաղելով իմ ասածները, իր երկրորդ համակում գրում է. «Շ. Խաչատրյանը ուղղակի և անուղղակի հանապարհներով տառնում է... առհասարակ ձխտել Գրիգոր Ստեփանյանի և նրա չոկատի մասնակցությունը հայ ազատագրական շարժումներին»: Արտառոցն այստեղ այն է, որ նման բացահայտ կեղծիքի է դիմում նա, ով զոհիտական բանավեճի տարրական կանոններին անաղարտության համար կուրծք է ձեռնում:

«Պատմա-բանասիրական հանդես»-ի ընթերցողներին հայտնի է, որ Վեհահայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը՝ զբի վերաբերյալ արված մեր դիտողությունների մեջ ազատագրական շարժումներին Գրիգոր Ստեփանովի և նրա չոկատի մասնակցությունը ժխտելու առումով ոչ մի խոսք չի ասված: Պրոֆ. Վ. Պարսամյանը անհիմն կերպով Սյունիում օտար նվաճողների դեմ Դավիթ-Քեկի ղեկավարությամբ մղվող կռիվների մասնակիցներ է դարձրել 1728 թ. ամռանը՝ դեպի հայրենիք վերադարձող Վեկվոր հայեպին¹³: Նա չեղտել է, որ Վեկվոր հայերին չոկատը «տեղացիների» հետ Դավիթ-Քեկի զիխավորությամբ նույնիսկ մասնակցել է Հայիծորի ու սեղրու նակաամասրներին, ուր իր հաշիւություններով աչի է ընկել նաև Գրիգոր

¹⁰ Նույն տեղում, էջ 99—100:

¹¹ Տե՛ս նույն տեղում, վաղ. 6, 12, 14, տե՛ս նաև Պ. Հարությունյանի նշված աշխատությունը, էջ 187:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 57, 68:

¹³ Տե՛ս Վ. Պարսամյան, նշվ. ժող., էջ 26:

Ստեփանովը: Հայտնի է, որ 1728 թ. Գավիր-Ռեկր կենդանի չէր, եւտեալաւ Գրիգոր Ստեփանովը նրան հանդիպել է նրա ղեկավարած ապստամբությանը մասնակցել չէր կարող: Ահա այդ արտառոց պնդումների դեմ է, որ մենք առաւել էնք, որովհետեւ Վ. Պարսամյանը ուղղակի ետրինել է փաստերը:

Գավիր-Ռեկր ղեկավարած Սյունիքի աղատադրական շարժումներին Գրիգոր Ստեփանովի է. նրա ջոկատի մասնակցության մասին իր վարկածը ապացուցելու գործում Վ. Պարսամյանը ձեռնունայն դուրս եկավ: Սակայն ինչպես երևում է, դա նրան չանհանգստացրեց: Ի՞նչ ինչու տղիքի անհանգստացնի, չէ՞ որ նա տղատառտի ունի նաև «Երկրորդ քեզը», քստ ուրի Գրիգոր Ստեփանովը «լեհահայերի» իր ջոկատով մասնակցել է 1728—1730 թթ. Սղեախներում մղվող ազատագրական կռիվներին: Հեղինակը ջանում է հավաստիացնել նաև, քեզը քեզում ապագրված բոլոր վավերագրերը նույնպես վերաբերում են 1728 թվականին: Սակայն զարմանալի է, որ նա իր քեզերն ապացուցելու համար չի հենվում այդ վավերագրերի վրա, այլ րավարարվում է միայն վկայակոչելով նշված ղեկավարից տարիներ հետո ոռուական արհուների ներկայացված յուրաքանչիւների, այսպես կոչված «համատեղ ստորագրած» դիմումներ: Վ. Պարսամյանը պնդում է, որ «որեւէ հիմք չկա կասկածելու... հայ ազատագրական շարժման ականավոր գործիչների հետ Գրիգոր Ստեփանովի ստորագրած վավերագրերի նշուրյան վրա»:

Սակայն նկատենք, որ յուրաքանչիւների, այդ թվում նաև Գրիգոր Ստեփանովի մասնակցությանը գրված «համատեղ ստորագրած» դիմումներ գոյություն չունեն: Իրականում, դրանք Քարխան, Բաղի, Գրիգոր յուրաքանչիւների և Այրուներանի անունից ոռուական արհուների ներկայացված խնդրագրեր են, դրված Պետերբուրգում ոռու դրադիրների ռեզիդենցիայում, քեկադրված և ստորագրված մեկը՝ Քարխան Խախանովի, մյուսը՝ Բաղի Վասիլի կողմից: Վերոնիշյայ խնդրագրերը հետագրելով են որոշակի նպատակ՝ յուձել յուրաքանչիւներին ոռուական գիւնդուական ձառայության մեքընդունելու, նրանց ոռնիկ նշանակելու և մշտական րենկության տեղ հատկացնելու հարցերը րենական է, որ այսպիսի «կոլեկտիվ» խնդրագրերում հնարավոր չէր առանձին վերցրած տալ տուրաբանյուր յուրաքանչիւ անցյալ գործունեությունը, նույնիսկ րեղհանուր գծերով: Ուստի պատահական չէ, որ մատնացույց արվող վավերագրերում րացակայում են հենց այդ կոնկրետ տեղեկություններ: Հետևապես, դրանց օգնությամբ Սղեախներում մղվող ազատագրական կռիվներին Գրիգոր Ստեփանովի մասնակցության հարցը ստույգ որոշել հնարավոր չէ: Նկատենք նաև, որ երր Գրիգոր Ստեփանովը Սղեախներ եկավ, Բաղի, Քարխան յուրաքանչիւներ և Ավան խանի որդի Այրուներանը վաղուց հեռացել էին այնտեղից, հետևապես նրանք Սղեախներում իրար հանդիպել չէին կարող: Անշուշտ այդ յուրաքանչիւներ հետագայում Սղեախներից դուրս հանդիպել են ու միատեղ ձառայել «Հայկական Լսկադրոնում»:

Սղեախներում 1728 թ. տեղի ունեցած աղատագրական կռիվներին «լեհահայերի» ջոկատի մասնակցության մասին իր «քեզն» ապացուցելու համար Վ. Պարսամյանը վկայակոչում է նաև Գրիգոր Ստեփանովի ոռուական րագավորին ուղղած դիմումները: Այդպիսի մի րանի դիմումնէր, րոնք կան, րայց Գրիգոր Ստեփանովի և նրա ջոկատի Սղեախներ հասնելու ժամանակի մասին դրանցում եղած տեղեկությունները անորոշ և հակասական են:

Այսպիսով, որհան էլ հանելի չիքի վստահել գեներալ Ռումյանցեին, այնուամենայնիվ, Ռուսաստանի արտաքին գործերի կոլեկտիին հաղորդած նրա պաշտոնական տեղեկությունները այն մասին, որ 1729 թ. նոյեմբերին Գրիգոր Ստեփանովը, Պետրոս վարդապետ Խաչատուրովը չէին գնացել Սղեախներ և դեռես գտնվում էին Գերբենցում, մնում են աններելի: Ավելին, այն հաստատվում է նաև նրանով, որ Ավան և Քարխան յուրաքանչիւների 1729 թ. Ռուսաստանի արհուներին, արտաքին գործերի կոլեկտի, ինչպես նաև գեներալ-ֆելդմարշալ Վասիլի Վալդիմիրովիչ Գուլգուրովիին հասցեագրված նրանց քղրերում 1729 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Սրղախներում դորձող յուրաքանչիւների շարում Գրիգոր Ստեփանովի անունը չի հիշատակվում¹⁴:

Պետք է երթադրել, որ դեներալ Ռումյանցեր անշուշտ կատարել է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեկտիային տված 1729 թ. հոկտեմբերի իր խոստումը. «и впрдъ я не оставляю того способу искать к отправлению их туда» (Գրիգոր Ստեփանովին, Պետրոս վարդապետ Խաչատուրովին և մյուսներին Սղեախներ ուղարկել — Հ. Խ.)¹⁵: Գրիգոր Ստեփանովի ջոկատը իրոն ուղարկվել է Սղեախներ: Ուստի իրավացի է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, երր Գրիգոր Ստեփանովի և նրա ջոկատի մասնակցությունը Սղեախների պաշտպանությանը տեղադրում է

¹⁴ Տե՛ս Գ. Եզով, Сношения Петра Великого с армянским народом, 1898, СПб, էջ 444—446, ЦГБИА СССР, ֆ 13, л. 43, л. 40—41: АОИА, ֆ. 394, օп. 1, л. 163, л. 10—12; Լեոն, Հայոց պատմություն, հատ. 3, 1946, րենան, էջ 662—664 և այլն:

¹⁵ Տե՛ս АВ:Р, ֆ. «Сношен. России с Персией», 1729, л. 13, л. 25 и об.

1730 թ. չըջանակներում¹⁶։ Այժմ ավելի որոշակի կարող ենք ասել, որ Գրիգոր Ոսեփանովի ժողովար մասնակցել է Սղեմիներում թուրքերի դեմ մղվող կռիվներին միայն 1730 թ. առաին կեսին։

Ոսեփան Ն.Ի. միայն մոտավոր կերպով հնարավոր է որոշել Գրիգոր Ոսեփանովի և «լեհահայերի» չոկատի Սղեմիներ հասնելու ժամանակը, ազգա ավելի որոշակի է և ստույգ նշանց այնտեղից գուրս գալը։ Բոլոր աղբյուրները, այդ թվում նաև Գրիգոր Ոսեփանովի զիմումները, միաբերան հաստատում են նրա չոկատի՝ 1730 թ. ամռանը Սղեմիներից գուրս գալու և Գերենդից հարավ գտնվող Նավրան քաղաքում ոռոտական զորքերին մի սնալու փաստը։ Այդ հաստատվում է նաև զենքերի և զինամթերքի վկայությամբ։ 1730 թ. ոգոտոսի 29-ին նա հաղորդել է Ռուսաստանի արտաին գործերի կոլեգիա, որ թուրքերի հարձակման պատեառով Սղեմիներից հեռացել են Արախան Սալադա և Գրիգոր Ոսեփանով յուզբաշիները իրենց ընկերներով, ներկայացել են իրեն և նրանց յուրաքանչյուրին իմքը նշանակել է ամսական 6 ոռուրի ոռնիկ¹⁷։

Այս ամենը հերքում է Վ. Պարսամյանի նաև «Երկրորդ թերթ» Սղեմիների 1728—1729 թթ. աղատագրական շարժումներին «լեհահայերի» մասնակցության վերաբերյալ։

Ո. «Լեհահայերի մասնակցությունը Գավիթ-Բեկի ապստամբությանը» վավերագրերի ժողովածուի առաջարանի հեղինակի՝ արխիվային «նոս» փաստաթղթեր հայտնաբերելու մասին արած ինքնագրված առթիվ մեր նախորդ պատասխանում ասված էր. «Ճիշտ չէ Վ. Պարսամյանի նաև այն հայտարարությունը, որ իրք թե ինքն սուսին հեղինակն է. որ անդրադառնում է XVIII դարի 20-ական թվականների վերջերին Լեհաստանից և Ուկրաինայից Ռուսաստանի վրայով հայրենի մեկնած հայերին վերաբերող փաստաթղթերին»։ Հայտնի է, որ Պարսամյանից շատ առաջ այդ վավերագրերին ծանոթ են եղել և իրենց աշխատություններում դրանք օգտագործել են նաև ուրիշները։ Այսպես, օրինակ, այդ փաստաթղթերի մի մասը հիշատակված է ղեռն 1833 թ. լույս տեսած զրբերում (տե՛ս «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», Москва, 1833, часть I, էջ 367, 368, 369, 372 և հտ.)։ Ավելի ուշ պատմական զիտությունների ղոկոտը Պ. Տ. Հարությունյանը, 1954 թ. Մոսկվայում հրատարակված իր «Осободительное движение армянского народа в первой четверти XVIII века» ծավալուն ուսումնասիրության 187—188 էջերում, նույնպես հատուկ անդրադարձել է ինքնակամ առաերկա դարձած փաստաթղթերին, նշելով դրանց արխիվային աղբյուրը (նկատենք, որ Պ. Տ. Հարությունյանի աշխատության մեջ հիշված և Վ. Պարսամյանի կազմած ժողովածուում ղետեղված փաստաթղթերը քաղված են միևնույն աղբյուրից)։

Ձառմանում ենք, թե ինչպես է, որ Վ. Պարսամյանը «մոռացել» է հիշատակել հանդուցյալ պատմաբանի անունը¹⁸։

Ինչպես նկատում է ընթերցողը, այստեղ մենք լոկ սահմանափակվել ենք փաստերի ընդգրծումով։ Թվում է, թե վեհի խնդիր չի կարող լինել։ Բայց Վ. Պարսամյանը առաերկում է նաև այս ղեպում։ Նա հղում է արդարացնել ղրքի առաջարանում Գավիթ-Բեկի ապստամբությանը «լեհահայերի» մասնակցության վերաբերյալ Մոսկվայի Հին ակտերի արխիվում (մինչդեռ վավերագրերի աղբյուրը նշված է՝ «Архив БИР МВД СССР»)։ հայտնաբերած» արխիվային «նոս» փաստաթղթերի մասին արած ինքնառնկամը, պնդելով, թե «ԱՅԴ ՀԱՐՑԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՐԲԵՔ ՉԻ ԳՐԱԿԵԼ ՈՒ ՉԻ ԼՈՒՈՒՐԱԿԵԼ...» (ընդգծումը մերն է — Վ. Ն.)։ Ոսեփան Ն.Ի. որ այս ղնդումը հակասում է պատմական իրողությանը։ Ոստի ինչպես աղմկաբարությանը ու փոուն դարձվածներով հնարավոր չէ սեր սպիտակ դարձել, այնպես էլ չի կարելի համաձայնել Վ. Պարսամյանի հետ, թե այդ փաստաթղթերի «հայտնաբերումը» նրան է պատկանում, երբ դրանք վաղուց հայտնի են եղել մեր ղրականության մեջ։ Ինչպես արդեն ասվեց վերևում, ղեռն 1833 թ. Մոսկվայում էաղարյան եկամառի կողմից հրատարակված ոսվածածավալ, հարուստ ժողովածուում մանրամասն տեղեկություններ կան 1728 թ. հայրենի վերադարձող «լեհահայերի» մասին, լստ ոռում ցույց են տրված նաև այդ նուրերի արխիվային ղործերի համառները։ Պատմական գիտությունների ղոկոտը Պ. Տ. Հարությունյանը XVIII դարի առաին քառորդի հայ աղատագրական շարժումների պատմությանը նվիրված ուսումնասիրության մեջ «լեհահայերի» հայրենի

16 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 177։

17 Այստեղ նշենք, որ «Լեհահայերի մասնակցությունը Գավիթ-Բեկի ապստամբությանը» չոկածուի առաջարանում (էջ 25) Վ. Պարսամյանի հավաստիացումը այն մասին, թե Գրիգոր Ոսեփանովը 1730 թ. գուրս է եկել Սղեմիներից Թարխան յուզբաշու հետ, պարզապես թյուրիմացություն է։

18 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3 (26), էջ 275—276։

վերստանալու մասին գրել է ավելի քան երեք ընդհանուր էջեր, մեջբերելով մի շարք լուսինական փաստաթղթեր, նշելով այդ մարդկանց անունները, նրանց ձեռնարկները և ցույց տալով լուսինական արխիվային փոփոխությունները:

Նման դեպքերի համար էլ, որ ասվում է՝ մեկնաշարությունների հարկ չկա: Ավելացնենք միայն, որ ի տարբերություն վերոբերյալ սղորդությունների, Վ. Պարսամյանի «Ներդրումը» միայն այն է, որ նա անհիմն կերպով Գիլգոթ Ստեփանոսի չոկատի մասնակիցներին դարձել է «լեհահայեր» և Դավիթ-Քեկի ապստամբության ակտիվ մասնակիցներ:

7. «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» գրքի վերաբերյալ արված մեր մի շարք այլ դիտողություններ պետք է Վ. Պարսամյանի «մոռացության» է տվել և չհանգցել դրան: Այսպես, օրինակ, մենք գրել էինք, որ փաստաթղթերի ժողովածուն պատահաբար չէր հրատարակվում և ԱՆՓՈՒՅԹ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՅԱՆՈՐ ՄԱԿԱՐԴԱՆՈՎ, առանց ծանոթագրությունների բաժնի, որ առանձին փաստաթղթերի տված վերնագրերը չեն համապատասխանում նրանց բովանդակությանը և այլն, և այլն: Այժմ ավելացնենք նաև, որ ժողովածուում ղեկավարված փաստաթղթերը ընդհանրապես հրատարակված են լուրջ սխալներով, աղավաղումներով ու բացթողումներով: Բազմաթիվ փաստերից ու ապացույցներից նշենք միայն մի ֆանիսը: Արխիվային ընթերցանության զգուշացումը Ն. 48 վավերագրի նամակագրությունից պարզվում է, որ այդ փաստաթուղթը վերածնելիս քույր ևն տրված 10-ից ավելի լուրջ աղավաղումներ: Այսպես,

Փաստաթուղթում	Վ. Պարսամյանի ժողովածուի մեջ էջ (139—142)
— по справке	— подправке
— провиантом	— пропитанием
— мнений	— имени
— по выезде	— поведение
— да хлеба печеночной муки	— да хлеба печеного муки
— приданной	— приданное
— окладной книге	— вкладной книге
— де бывшие армянские не башн	— де бы вашей армянские башн
— на одном	— надобно
— о призывании	— призывании
— команды	— командиров
— Вашего императорского величества	— Нашего императ. величества
— им	— нам
— гарнизонного	— гарнизона

Իսկ ժողովածուի 132 և 135 էջերում պետք է Վ. Պարսամյանի գրքի մի քերական հարվածով Սուրբ Գևորգի դարձել է... ամրոց: Փաստաթուղթում ասված է. «...новопостроенную бывшую крепость святого креста на Сулаке», որը «վերածնված» է այսպես՝ «Новопостроенную бывшую крепость святого креста Насала»:

Այս փաստերն ինքնին շատ բան են ասում պետք է Վ. Պարսամյանի կազմած «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» ժողովածուի մասին:

* * *

XVIII դարի հաճախակի քաղաքական ժողովուրդները համատեղ համառ պայքար են մղել պարսկական ու թուրքական զավթիչների դեմ: Շատերն են բնկել այդ համատեղ պայքարում և իրենց արյունով կոխ մեր ժողովուրդների դարավոր անխախտ բաղկամությունը: Այդ համատեղ պայքարի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն իսաայի Հասան-Ջալալյանի, Ավան յուզբաշու ղեկավարած՝ Վահրամի և Դավիթ-Քեկի, Մխիթար Սպարապետի գլխավորած՝ Սյունիքի ազատագրական շարժումները: Դրանք ստառ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հերոսական էջերից են, որոնք իրենց վրա իրավացիորեն բեկնել ու

19 ՏԼ՝ «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», 1833 г., Москва, ч. I, էջ 367, 368, 369, 372. Նաև՝ Պ. Տ. Հարությունյանի նշված աշխատությունը, էջ 185—188, 238 և այլն:

բևեռում են մեր պատմաբանների, գրողների ու արվեստի շատ գործիչների ուշադրությունը: Նուր-նակալ Բիշ Բան չի արված այդ շարժումների պատմության, նրանց մասնակիցներից շատերի կյանքի ու գործունեության ուսումնասիրման, լուսաբանման ուղղությամբ: Քայց դեռ շատ էլ անելիքներ կան: Ուստի հայտնաբերված արխիվային ամեն մի վաստաբոլոր, որը կնպաստի մեր ազատագրական շարժումների պատմության բուզմակողմանի հետազոտմանը և կհաստատեն նրա գործիչների կյանքի տարեգրությունը, տեղի է ուշադրության արժանանա, իսկ այն արխիվների վոշիների աստից ու մոռացումիդ փակողը՝ դրվատանքի ու խախտումների: Ասկայն դրա հետ մեկ-տեղ պետք է կտրականապես մերժվի ու դատապարտվի ինֆանտիկլամի նպատակով սզատա-գրական շարժումները և ժողովրդականություն վայելող գործիչների անունները շարաշահելու ամեն մի փորձ: Ինչպես ցույց տրվեց վերևում, Վ. Պարսամյանի կազմած ու հրատարակած «Լե-հահայերի մասնակցությունը Գավիր-Ֆեկի ապստամբությանը» վավերագրերի ժողովածուն հենց այդպիսի ձախողված փորձերից մեկն է:

XVIII դարի 20-ական թթ. հանգամանքների բերումով Հայաստանից հեռացած և եվրոպա-յում թափառող հայ վախստականների հայրենագաղթությանը և ընդհանուր թշնամու դեմ մղվող կոիվներին նրանց մասնակից դարձնելու նպատակով հայ ֆադաֆական գործիչների ու ոռուական կառավարության միջև վարվող բանակցությունների պատմությանը վերաբերող վաղուց հայտնի թղթերը Վ. Պարսամյանը ոչ միայն ներկայացրել է որպես «նոր» վավերագրեր, այլև արել դրանց բովանդակությանը միանգամայն հակասող, անընդունելի եզրակացություններ ու ներադրություն-ներ: Գրքի առաջաբանը գրված է վրում ոռով և տառապում է անոիմն ու անմտածված հայտա-բարություններով: Ըստ նրա հեղինակի, նույնիսկ Արեելյան եվրոպան հալկական կենտրոն է եղել...: Նա հենց այդպես էլ դրել է, թե իբր հայկական ինֆենտույն թագավորության կործանու-մից՝ «ԿԻԼԻԿԻԱՅԻՑ ՀԵՏՈ ԱՐԵՎԵԼՅԱՆ, ԵՎՐՈՊԱՆ, ԵՂԵԼ Է ԹԵՐԵՎՈ ԱՄԵՆԱԿԱՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԸ, ՈՐՆ ԻՐ ՈՒՐՈՒՅՆ ՏԵՂԵ ՌԻՆԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՐՉ»²⁰ (ընդգծումը հեղինակինն է — Ն. Խ.): Ավելիք, Վ. Պարսամյանից իմանում ենք, որ եվրոպական որոշ ֆադա-ններում, մասնավորապես Լվովում, հայերը բնակություն են հաստատել դեռ այն ժամանակներից, երբ այդ ֆադաֆները նույնիսկ գոյություն չեն ունեցել: Այսպես, Վ. Պարսամյանը Լվովի հայ գա-ղութի առաջացումը նշել է XVIII դարում²¹, այն դեպքում, երբ հայտնի է, որ այդ ֆադաֆը հիմնա-դրվել է միայն XIX դարի կեսերին:

Այս ամենից հետո բոլորովին տարօրինակ չեն հնչում արդեն Վ. Պարսամյանի մտքի մյուս «գոհարները» և մասնավորապես նրա այն պնդումը, թե՝ «հայ ազատագրական շարժումները պատկանում էին օտար նվաճողների ու հարստահարողների դեմ ազատասեր ժողովուրդների մղած այն շարժումների թվին, որոնք նպաստում էին հասարակության պատմական զարգացմանը, ՄԱՐԿԻՆԻՅԱՆ ԱՌԱՋՆԻՍՏԱՆ»²²:

«Լեհահայերի մասնակցությունը Գավիր-Ֆեկի ապստամբությանը» ժողովածուի վերաբերյալ արված մեր դիտողությունները ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ հավանության արժանացան ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի և «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրության կողմից:

Ահա թե ինչ էլ դրել ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը «Լեհահայերի մասնակցությունը Գավիր-Ֆեկի ապստամբությանը» վավերագրերի ժողովածուի մասին. «Դժվար չէ, իբրեւ, հա-մոզվել, որ այս դրվի խոստումնային վերնագիրը աղերս չունի իր բովանդակության հետ: Այն չի կարող որեւէ չափով արդարացնել Գավիր-Ֆեկի ապստամբության մասին «նոր նյութեր» փրնտ-րող հետադոստոդի սպասումը: Ակներե է, որ վավերագրերի այս ժողովածուն ունկլամելու կարիքը ավելի գոռեղ է եղել կազմողի մոտ, քան պատմագիտությանը նպաստելու պահանջը:

Փաստ է, որ սովետահայ հետադոստոդներից ոմանց այդ վավերագրերը ծանոթ են եղել պրոֆ. Վ. Պարսամյանի և Բանի մի ուրիշների «հայտնաբերումներից» շատ առաջ, և երե այդ նյութերը մինչև հիմա չլին արժանանում առանձին հրապարակման, այդ միայն այն պատհանով, որ չի եղել այն համոզմունքը, թե դրանք «նոր լույս են սփռում Գավիր-Ֆեկի պատմությանը» կամ «XVIII դարի հայ ազատագրական շարժման մասը չլերի վրա» (տե՛ս ժողովածուի առաջաբանը, էջ 24):

Դժվար է հասկանալ, թե ինչու առանց խելամուտ լինելու վավերագրերի բովանդակությանն ու դրանց դիտական մշակման որակին, երևանի համալսարանը շտապել է լույս ընծայել այս ժողովածուն՝ հարկ համարելով Գրքի հայերեն բնագրին կցելու ոչ միայն նրա ոռուներեն թարգ-մանությունը, այլև նույն իսկ վավերագրերի դժվարընթեռնելի նմանությունները և ընդսփին՝

20 Տե՛ս Վ. Պարսամյան, Նշվ. ժող., էջ 19:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 5:

ժողովածուի կազմողին անհարկի կերպով հատկացնելով... հեղինակի իրավունք: Պիտի ենթադրել, իհարկե, որ համալսարանի հրատարակչական հարգարժան խորհուրդը օժանդակել է մեծածախս այս հրատարակությանը՝ զոհ դառնալով խարուսիկ այն տպավորությանը, թե զործ ունի Դավիթ-Քեկի անվան հետ կապված մինչ այժմ անհայտ նյութերի հետ, որոնք սղորյուր են ծառայելու ոչ միայն XVIII դարի հայ ազատագրական շարժումների, այլև «հայ-ոսմական, հայ-ուկրաինական և հայ-լեհական հարաբերությունների պատմության համար»: Թյուրիմացարար այդպես էլ նենգ հայտարարված է զբի տպագրության հրատարակչության հանձնարարականում²³:

Վ. Պարսամյանը այժմ խորամանկության դիմելով, չի անդրադառնում ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կարծիքին, իբր թե հետագա «մանրամասն վերլուծումներ ու լայն փաստարկումներ» անելու նպատակով, արհեստականորեն անջատում է այն մեր բննադատությունից:

Դա, իհարկե, նրա զործն է: Բայց մեր խոսքը ավարտելուց ստաջ ուզում ենք նորից նշել, որ Վ. Պարսամյանի կազմած «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» ժողովածուն իսկապես ձախողված զործ է, որի մեջ լայնորեն տեղ են գտել արտաոց սխալներ, աղավաղումներ, հակադիտական, չիեծու պնդումներ և անհամեստության, ինքնառեկամի ու անբարեխղճության զարմանալի օրինակներ:

Հ. Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՄԹԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. — «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1964 թ. № 3-ում տպագրելով պրոֆ. Վ. Պարսամյանի, ակադ. Ա. Հովհաննիսյանի և բնկ. Հ. Խաչատրյանի նամակները, նշել էինք, թե խմբագրությունը համամիտ է այն բնդհանուր զնահատականին, որ Ա. Հովհաննիսյանը և Հ. Խաչատրյանը տալիս են «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» ժողովածուին: Խմբագրությունը այժմ ևս կանգնած է նույն տեսակետի վրա:

²³ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 176—177: